



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» « հունիսի » 20 19թ. № 195-ՂԿ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Նշանակել ծառայողական քննություն նախարարության կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության պետ Արթուր Պետրոսյանի կողմից 2019 թվականի մայիսի 29-ի գրությանն (մտից 77312) սահմանված ժամկետում ընթացք չտալու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) 2019 թվականի մայիսի 29-ի <<Անտառային մոնիթորինգի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությանը սահմանված ժամկետում ընթացք չտալու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,
- 3) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանը ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«25» հունիսի 2019թ. ք. Երևան